Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մաթեմատիկա» առարկայի /18 դասաժամ/, «Աշխարհագրություն» /8 դասաժամ/ և «Պատմություն» առարկայի /15 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի համաձայն: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար, 3×4 չափի
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2024 թվականի սեպտեմբերի 4-ից մինչև սեպտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ.Չկալովկա , 1-ին փողոց, շենք 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093061676 հեռախոսահամարով: